

Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն
ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ
ԺՈՒՌՆԱԼԻՍՏԻԿԱՅԻ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԳԻՏԽՈՐՀՐԴԻ

2018 թ. հոկտեմբերի 22-ի թիվ 2 նիստի

ԼՍԵՑԻՆ. ԵՊՀ 100 և Ժուռնալիստիկայի ֆակուլտետի 20-ամյակների նախապատրաստական աշխատանքների մասին Ն. Ն. Մարտիրոսյանի հաղորդումը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Ն. Ն. Մարտիրոսյան, Մ. Մ. Հովսեփյան, Դ. Վ. Պետրոսյան, Ա. Շ. Ավետիսյան, Ա. Ռ. Մենենձյան:

ՈՐՈՇԵՑԻՆ. ա) Ձևավորել Ժուռնալիստիկայի ֆակուլտետի 20-ամյակի նախապատրաստական աշխատանքները համակարգող կազմկոմիտե:

բ) Նախապատրաստել և անցկացնել «Ժուռնալիստիկա և հաղորդակցություն» գիտաժողով՝ նվիրված ԵՊՀ 100 և Ժուռնալիստիկայի ֆակուլտետի 20-ամյակներին:

ԼՍԵՑԻՆ. 2018/19 ուստարվա առաջին ընթացիկ քննությունների նախապատրաստական աշխատանքների մասին Ա. Ռ. Մենենձյանի հաղորդումը:

ԼՍԵՑԻՆ. «Ժուռնալիստիկա և հաղորդակցություն» ԺԳ (13) պրակի հրատարակության և ԺԴ (14) պրակի նախապատրաստական աշխատանքների մասին խմբագրական խորհրդի նախագահ Դ. Վ. Պետրոսյանի հաղորդումը:

ԼՍԵՑԻՆ. Պրակտիկայի կազմակերպման և արդյունավետության բարձրացման ուղղությամբ կատարված աշխատանքների մասին Ն. Ն. Մարտիրոսյանի հաղորդումը:

ԼՍԵՑԻՆ.- Տպագիր և հեռարձակվող լրատվամիջոցների ամբիոնի ասիստենտ, բան. գիտ. թեկնածու Վ. Թ. Հակոբյանին դոցենտի կոչում ստանալու գործընթացին մասնակցելու երաշխավորություն տալու հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.- Ն. Ն. Մարտիրոսյան, Մ. Մ. Հովսեփյան, Դ. Վ. Պետրոսյան, Ա. Ռ. Մենենձյան, Ն. Է. Վարդանյան:

ՈՐՈՇԵՑԻՆ.- Երաշխավորել Տպագիր և հեռարձակվող լրատվամիջոցների ամբիոնի ասիստենտ, բան. գիտ. թեկնածու Վ. Թ. Հակոբյանին մասնակցելու դոցենտի կոչում ստանալու գործընթացին:

ԼՍԵՑԻՆ.- Ա. Շ. Ավետիսյանի առաջարկը «Ժուռնալիստիկա» մասնագիտական խորհուրդ ստեղծելու վերաբերյալ:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.- Ն. Ն. Մարտիրոսյան, Դ. Վ. Պետրոսյան, Ա. Ռ. Մենենձյան, Դ. Հ. Ալավերդյան, Ն. Է. Վարդանյան:

ՈՐՈՇԵՑԻՆ.- Համապատասխան գործընթաց սկսելու առաջարկով դիմել ԵՊՀ գիտական քաղաքականության և միջազգային համագործակցության գծով պրոռեկտորին:

ԳԻՏԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ

ՔԱՐՏՈՒՂԱԲ



Ն. Ն. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

Ա. Ռ. ՄԵՆԵՆՁՅԱՆ